

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Տրդատ Սարգսյանը հյուրընկալել է ՌԴ Արխանգելսկի մարզի հայ համայնքի ղեկավար Մամիկոն Գեկչյանին

30.04.2019



Այսօր ՀՀ Վայոց ձորի մարզպետ Տրդատ Սարգսյանը հյուրընկալել է ՌԴ Արխանգելսկի մարզի հայ համայնքի ղեկավար, <Արխանգելսկի ու Վայոց ձորի մարզի համագործակցության միություն> ոչ կոմերցիոն կազմակերպության տնօրեն Մամիկոն Գեկչյանին: Մարզպետ Տրդատ Սարգսյանը ողջունել է հյուրին Վայոց ձորի այցի կապակցությամբ: Երկու մարզերի գործընկերները զրուցել են առաջիկա անելիքների մասին:

Այնուհետև Տ. Սարգսյանը և Մ. Գեկչյանը հանդիպել են մարզի գյուղուղորտի և արդյունաբերության ներկայացուցիչների հետ և քննարկել առևտրատնտեսական փոխադարձ համագործակցության հարցեր:

Նշենք, որ ա/թ մարտի 18-20-ը ՀՀ Վայոց ձորի մարզպետ Տրդատ Սարգսյանի ՌԴ Արխանգելսկի մարզ մարզ կատարած աշխատանքային այցի շրջանակում ՀՀ Վայոց ձորի մարզպետ Տրդատ Սարգսյանի և Արխանգելսկի նահանգապետ Իգոր Օռլովի մասնակցությամբ Արխանգելսկում կայացել է <Հայաստանի տան> բացման արարողությունը: Իսկ Երևանում <Արխանգելսկի տան> բացումը տեղի կունենա 2019 թվականի հոկտեմբեր ամսին:

Առևտրային տների հիմնումը Հայաստանում և Արխանգելսկում երկու մարզերի միջև ապրանքաշրջանառությունը մեծացնելու լայն հնարավորություն կտա, ինչպես նաև երկու երկրների համար կընձեռի գործընկերներ ձեռք բերելու մեծ հնարավորություններ:

Հիշեցնենք, որ ՌԴ Արխանգելսկի մարզը համագործակցում է ՀՀ Վայոց ձորի մարզի հետ 2012 թ.-ից: Իսկ ՌԴ Արխանգելսկի և ՀՀ Վայոց ձորի մարզերի միջև առևտրատնտեսական, գիտա-տեխնիկական և հումանիտար համագործակցության 2018-2020 թթ. միջոցառումների իրականացման ծրագիրը ստագրվել է 19.09.2018-ին: